

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Трудовой Редакции „Искусство“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ:
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուով

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Բողոքականների գործունէութիւնը Փոքր-Ասիայում:—Ներքին տեսութիւն. Նամակ երևանից: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա:—(Մշակի) հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Հայրենագիտութեան դասախօսութեան եղանակը:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆԻՑԻՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

Բողոքականները շարունակում են իրանց գործունէութիւնը Փոքր-Ասիայում մեծ եռանդով: Եյս օրերս մենք ստացանք Փոքր-Ասիայի Բրուսաս քաղաքի մէջ հիմնված որբանոցի վարչութենից մի ազգաբարձութիւն գերմաներէն լեզուով, որի մէջ խնդրում են բոլոր հաւատացեալներին օգնել որբանոցին իրանց նուիրատուութիւններով:

Բրուսասյի աւետարանական որբանոցի նպատակն է պատրաստել քրիստոնէայ ուսուցչուհիներ Փոքր-Ասիայի ամենայեւորեկամ տեղերը նրանց ուղարկելու համար:

Ազգաբարձութիւնը որ տպված է գերմաներէն լեզուով և ստորա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ինչպէս ամենայն գիտութիւնների, այնպէս և աշխարհագրութեան դասախօսութիւնը պէտք է լինի որքան կարելի է նկատողական, բայց ոչ թէ քարտէզի վրա աջ ու ձախ, վեր ու ներքե ցուցամառը կամ փայտի ծայրը օրօրելով և տարուբերելով, այլ աշխարհագրութեան գիտութեան հիմք դնելով հայրենագիտութեան դասախօսութիւնը: Քանի որ մեր դպրոցների մէջ աշխարհագրութեան առաջին դասերը կը սկսվեն «Ինչ է աշխարհագրութիւնը, ինչ է հորիզոնը, ինչ է ձև ունի երկիրը, ինչ է երկրագունդը, առանցքը, հասարակածը, միջօրեան» և այլն և այլն վերացական հարցերով ու պատասխաններով, միշտ անօգուտ, անհիմն և տաղտկալի կը մնայ աշխարհագրութեան ուսմունքը: Աշխարհագրութեան ծանօթութիւնը, յառաջադասը և նկատողականութիւնը ներշնչողը և գոյացնողը միայն հայրենագիտութեան կանոնադր դասախօսութիւնն է: Շտապներ նրան մտցնել մեր տարական դպրոցների մէջ, լարենք մեզ յանձնված աշխարհագրութեան ուսուցչութիւնը և շարժեցնենք նրանց մէջ ճշմարիտ հետաքրքրութիւն այն աղբու միջոցներով, որոնց առաջնորդում է մեզ հայրենագիտութիւնը:

Հայրենագիտութեան ուսուցիչը առաջին դասը

գրված է Գրիգոր Բաղդասարեանի անունով մանրամասնաբար նկարագրում է որբանոցի աննախանձիկ գրութիւնը, նրա կրած առաւելանքները վերջին պատերազմի ժամանակ, յիշում է որ ունելով միայն տարեկան 1300 ֆրանկ եկամուտ, անկարող է այդ միջոցներով իր գոյութիւնը շարունակել, եթէ նրան օգնութիւն չը հասցնեն հաւատացեալները:

Հիմնարկութիւնը կապեր ունի Հիւսիսարեայի և Գերմանիայի հետ: Ազգաբարձութեան մէջ յիշված է թէ ում ձեռքով և որտեղ ընդունվում են կամուրջ նուիրատուութիւններ յօգուտ յիշեալ հիմնարկութեան:

Նուիրատուութիւնները ընդունվում են Բաղէլ քաղաքում (Հիւսիսարեայում), Հտուադարտի մէջ (Ալիւրեմբերգում) և Լար քաղաքում (Բաղրնի գլխութեան մէջ):

Հա ինչպիսի տոկոսութեամբ և ինչ եռանդով, ինչ բաղադրեալ կազմակերպութեան վրա հիմնվելով գործում են բողոքականները Փոքր-Ասիայում և Հայաստանում:

Մեզ, լուսաւորչական հայերիս,

սկսում է հասկացողութիւն տալով աշակերտներին պատկերի, մակարդակի և մասշտաբի վրա. նախ նկարելով մի առարկայի պատկեր և նոյն առարկայի մակարդակը, ցոյց է տալիս—ինչպէս պէտք է նայել առարկային նրա պատկերը նկարելու համար, ինչպէս նրա մակարդակը գծագրելու համար և առարկայի որ մասերը աներկոյթ են գծագրած մակարդակի վրա: Այնուհետև ուսուցիչը կանոնադր հարցեր առաջարկելով, դարձնում է աշակերտների ուշադրութիւնը որոշելու և նկատելու այն տարբերութիւնը, որ նրանք դիւրաւ նկատում են ցոյց տուած առարկայի, աչքի առաջ ունեցած պատկերի և մակարդակի մէջ: Նոյն առարկան դնելով սեղանի վրա, ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է նրա մակարդակը գծագրել հետագի, որով ծանօթացնում է գործածական չափերից մեծերի և փոքրերի հետ, հասկացողութիւն է տալիս մեծ առարկաների մակարդակների գծագրութեան եղանակի մասին և թէ ինչպէս հարկաւոր է փոքրացնել մակարդակի երկայնութիւնը և լայնութիւնը, որ մակարդակը լինի ուղիղ:

Երկրորդ դասին ուսուցիչը նպատակը պէտք է լինի տեղեկութիւն տալ առարկաների կանոնաւոր դիրքը որոշելու մասին: Սրա համար նա տանում է աշակերտներին ուսուցման թաղի և կամ դաշտը, խօսում է նրանց հետ աշխարհի գլխաւոր և երկրորդական կողմերի, երկնքում արեգակի առաւօտմանից մինչև կէսօր և կէսօր վանից մինչև երեկոյ շարժման վրա, թէ աշխարհի որ կողմերը գտնվում են մեր աջ, ձախ և յետեի կողմերը, եթէ մեր երեսը դարձնենք դէպի արեւելք, դէպի արեւմուտք, դէպի հարաւ կամ դէպի հիւսիս. թէ ինչպէս պէտք է արեգակին նայելով որոշել աշխարհի կողմերը և երբ

մնում է ուսումնասիրել բողոքականների հասարակական և ազգագրութեան գործունէութեան կազմակերպութեան և եղանակի ձևերը և օրինակ տունել նրանցից: Եթէ ոչ ինչպէս մենք մեր լրագրում շատ անգամ կրկնել ենք, մենք ամեն բանի մէջ յետ կը մնանք մեր բողոքական եղբայրներից և կուշանանք ամբողջ վրա մեր ազգեցեցութիւնը ներգործելու մէջ, կուշանանք մեր արժանաւոր և բնական տեղը բռնելու մեր ազգի կրթութեան և լուսաւորութեան գործի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

9 հոկտեմբերի

Ամսիս 8-ին կիրակի առաւօտեան, շտապով գնում եմ փողոց որ տեսնեմ վառելափայտ կայարանը: Կայարանում որ առնեմ:

—Ի՜նչ արեւ, այդպէս շտապով, հարցնում է ինձ ծանօթներիցս մէկը: Գնում եմ ցոյց առնելու:—Ի զոր վաղում ես, ես հրապարակեցի եմ գալիս. երկու սալ ցախ կար, ծախեցի իւրաքանչիւր սալը 25 ռուբլով:—Ի՜նչ ես խօսում, բարեկամ, 25 ռուբլով սալը ի՞նչ է իմացել կամ տեսել. չը լինի թէ սխալվում ես:—Ամենին չեմ սխալվում. ցախն էլ ծիրանի չէր, այլ ուռի, բարդի և այլն:—Բա, այսքան խեղճ և

անկարելի է արեգակով այդ որոշմունքը անել: Կէսօրի ժամանակ մի երկար փայտ ցցելով գետնի մէջ և ցոյց տալով նրա փոքրիկ և կարճ ստուերի վրա, բացատրում է ստուերի փոքրութեան և դէպի հիւսիս նայելու պատճառները, միանգամայն տեղեկութիւն տալով ստուերի օգնութեամբ աշխարհի կողմերը որոշելու կարելութեան վրա և թէ երբ այդ միջոցը յարմարութիւն և անյարմարութիւններ ունի: Աւելորդ չէ այստեղ ցոյց տալ աշակերտներին և խորամանկ կոմպարս և բացատրել թէ ինչպէս այդ փոքրիկ առարկայով ծանաչում են աշխարհի կողմերը ամենայն խուր և ծածկված տեղերում:

Աչքի առաջ ունենալով այն, որ աշակերտները միշտ դասի ժամանակ գտնվում են դասատան մէջ, երրորդ դասը պէտք է նուիրվի դասատան սենեակի քննադատութեանը, պէտք է նայվի ամեն կողմից, առանց զանցառութեան նկարագրելով նրա դիրքը, երկայնութեան և լայնութեան չափը, գոյնը, շինութեան նիւթեղէնները, այսպէս և այն բոլոր առարկաները, որ գտնվում են նրա մէջ: Մասշտաբի հետ արդէն ծանօթ լինելով աշակերտները, ուսուցիչը նրանց անընդմիջական ձեռնամխութեամբ ձեռք է դարձնում նկարելու դասատան մակարդակը գրատախտակի վրա, մի արշինի տեղ վերցնելով պայմանաւորաւ մասշտաբի մէկ վերջով: Մակարդակը գծագրելով է դասատան առանձին մասերի մեկնութիւններով և բացատրութիւններով, որպէս զի ոչ մի գիծ, ոչ մի կէտ վերացական տպաւորութիւն չը ընդդիմ աշակերտի վրա: Ուսուցիչը գրատախտակի վրա նշանակելով, արեւելք, արեւմուտք, հիւսիս և հարաւ, հասկացնում է թէ սենեակի մակարդակը գծագրելուց առաջ պէտք է գծագրենք մասշտաբը և քի

աղքատ մարդիկ ինչ պէտք է անեն. ձմեռն էլ գալիս է:—Ի՜նչ Աստուած ողորմած է, դու արի գնանք Պօղոս-Պետրոս եկեղեցին:

—Ի՜նչ կայ միտեղ:—Այսօր Գ. օրիորդական դպրոցի տասերեկու երրորդ տարեգարձն է. տեսուչը տոմսակներով հրաւիրել է քաղաքացոյց: Նշիւղար եպիսկոպոսն էլ պատարագիչ է. պատարագից յետոյ պէտք է դպրոցի հայիւն էլ ներկայացնէ տեսուչութիւնը:

—Հը, գնանք:—Հա-հա, գնանք լաւ բաներ կը տեսնենք:—Լաւ, գնանք:

Մենք գնացինք, և պատարագի կէսին հասանք: Բոլոր աշակերտուհիները, թուով մինչև 80 հոգի, ներկայ էին պատարագին: Բոլորն էլ զլխաբաց և սպիտակազգեստ էին, ամենքի պարանոցիցն էլ կախած էր կանաչ ժապաւէն սպիտակ հագուստի վրայից ժամացուցի չղթայի պէս: Դպրութեան պաշտօնն էլ օրիորդներն էին կատարում, ձայնագրութեան ուսուցչի կառավարութեան ներքոյ: Պատարագը վերջացաւ: Օրիորդ վարժուհի Ալիւսանանց և երկու փոքրիկ վարժուհիներ առաջ ընկած դուրս բերին աշակերտուհիներին: Տեսուչը երգեցիկ օրիորդների ետեւից «Անձինք նուիրեալքն» ասելով, խաչ ու խաչվառներով դուրս եկաւ: Սրան հետեւում էր պատարագիչ արքայանք, աջ ու ձախ կողմից մի—մի քահանայ, առջեւից երկու բուրվառ երկու տիրացու և ետեւիցն էլ ժողովուրդը: Այսպէս երգելով, քոյրերով, բուրվառներով գնացինք դպրոցը, միմեանց տրորելով: Դպրոցի դահլիճը դարձրված էր կայսեր և Վեհափառ կաթողիկոսի պատկերներով, որոնց շուրջը պատած էր ծաղիկներով: Առանձին գեղեցկութիւն էր տալիս դահլիճի թատրօնական բեմը և կարմիր մահուղով ծածկված սեղանը, որի վրա դրված էին հաշտեմատեանները: Սրա առաջնորդը գինի Աւետարանին «Հայր Մերն» ասելով, վերջացրեց արարողութիւնը, հետեւեալ ազգու խօսքերով:—«Օրհնեալ ժողովուրդ, ես իմ պարտքս կատարեցի. ինչ կը վերաբերի այս հանդիսի նշանակութեանը այս մասին ձեզ հետ կը խօսի հայր Վահան վար. Բատումանցը, ես գնում եմ զգեստս հանելու. օրհնեալ էք և օրհնեալ լինիք:» Ժողովրդին շատ ուրախացրեց արքայանի այդ կարգադրութիւնը. Հայր Բատուման-

կողմից աւելի յարմար է նայել գրատախտակի վրա, երբ որ կամենում ենք նկարել նրա մակարդակը, թէ ինչ ձև կունենան յատակը և պատերը մակարդակի վրա: Այնուհետև ցոյց է տալիս թէ ինչ բաների երկայնութեան և լայնութեան չափերի անպատճառ պէտք է դուրս բերենք մակարդակի գծագրութեան չըջանալու լրացնելու համար և ինչպէս պէտք է մոծել նրա մէջ դռների, պատուհանների, նստարանների, ուսուցչի սեղանի, աթոռի, գրատախտակի և համարիչի բռնած տեղերը: Այս ամենայն մանրամասնութիւնների խօսակցվելու հետ միասին, առանց մի որ և իցէ երեւելի դժուարութեան արդէն և գծագրված և վերջացած է լինում դասատան սենեակի մակարդակը, որը սածովիկ շարժում է աշակերտների ուշադրութիւնը և ամեն մէկը նրանցից կամենում է մասնակցել լինել այն պատասխանների մէջ, որ ուսուցիչը մակարդակի ամեն մի կէտի բացատրութեան համար կարճ և որոշ հարցերով պահանջում է ամբողջ դասատանից:

Չորրորդ դասին արդէն իւրաքանչիւր աշակերտ բերում է իր հետ իր քննադատութեան սենեակի մակարդակը, որ ուսուցչի առաջարկութեան և պատուէրի համաձայն գծագրել է տանը: Ուսուցիչը հրամայում է ամենքին գրել մակարդակի տակ իրանց անունները և աղբանդները. հաւաքում է այդ բոլոր մակարդակները և շարքով դնում է դասատան աշակերտների դիմացի պատի վրա. կիրակոսեանցին կանչում է Մարտիրոսեանցի սենեակի մակարդակը նկարագրել բանաւոր ամեն կողմից, Պետրոսեանցին կանչում է Կիրակոսեանցի սենեակի նկարագրութիւնը պատմել մակարդակի վրա, միանգամայն ասելով նրա երկայնութեան, լայնութեան

ցերեկով գնում են մի պարոնի կրպակը նրա-
նից փող են պահանջում, հակառակ դեպքում
նրան վնասել սպառնալով, մենք ասում ենք
«մեզ ինչ» երբ ամեն մի գիշեր մի քանի տուն
ու կրպակ անընդհատ ջարդում են, կրկին մենք
«մեզ ինչ» ենք ասում, երբ քաղաքի կենտրոնում
սրահի մէջ զետեղված մի մեծ տեղ խոտին կը-
րակ են տալիս— և եթէ կրպակ չէ տարածվում,
այն ոչ թէ պարտական ենք մեր հրդեհաշիջ-
գործիչներին որոնք Ախալքալաքում տեսնված
բաներ չեն, այլ այն հանգամանքին որ այդ
գիշեր բոլորովին քամի չը կար և քաղա-
քին մօտ գտնված Տվերսկի դրազուներին
գունդը չուտ հասաւ և ցրուցան արեց զէղը—
մենք կրկին «մեզ ինչ» ենք կրկնում, երբ մի մու-
րացիկ կնոջ տունը մտնելով խեղճի ունեցած
մի քանի պղնձեղէն ամանեղէնների հետ նրա
վերջին ունեցած անկողինը ևս տանում են,
կրկին «մեզ ինչ»

Բայց որ մի պատահումը կարող եմ մի առ-
մի կրկնել, բաւական կը լինի եթէ ասեմ որ
այստեղ չը լսված քանակութեամբ աւազակու-
թիւն, գողութիւն և կատարվում են 2—3 տներում
կամ կրպակներում գողութիւններ կամ գոնէ փոր-
ձեր, և ի հարկէ դա մի այնպիսի քաղաքի համար
ինչպէս Ախալքալաքն է, արդարեւ մի շատ մեծ
պրոցեսն է և նշանակ է տալիս թէ ինչպէս այդ
գողերը անպատիժ մնալով քաղաքներէ են:
Բայց դանք այն անտարբերութեամբ որ անալ-
քալաքացիք իրանց թողնաւորում են «մեզ ինչ»
կամ «ինձ ինչ» արտասանելով, կը կամենայի
նրանց հրապարակապէս մի հարց առաջարկել,
բաւ ում ինչ ում էք հրամայում դիմել իմ հարցով,
ախալքալաքացիներն ալեքսանդրապոլսիներն թէ
այլ քաղաքացիներն: Գիտեմ ինձ կը պատահա-
նեն թէ նրանցից ոչ մինին հարկաւոր չէ գիտել,
այլ մենք պէտք է մեր ցաւին դարձան տաններ:
Բաւական չէ ասել թէ անալքալաքացիք անտար-
բեր են, այլ պէտք է ասել որ կամ նրա մասը
զուցէ դադարապէս համակրումէ այդ սրկաններն,
կամ նա արդէն անզգայացել, հասել է մեռելա-
յին դրութեան: Միթէ մենք ամենքս իւրաքան-
չիւր օր չենք տեսնում այն սրկաններն, որոնք
համարեա մի որոշեալ դարձ չունեն, այնու ամե-
նային առաւօտից մինչև երեկոյ, գիշերը մինչև
լոյս, ֆայէտօսով ման եկողները, զուքված դար-
դարված դավով զուռնով փողոցներ չափողները
և այլն և այլն նրանք են. ի հարկէ արգելել
նրանց այդ ամենօրեայ զուարճութիւնները մենք
առ այժմ չենք կարող, բայց մեր խելքը և դա-
տողութիւնը մեզ վրա պարտք են գնում տեղե-
կանալ դրանց միտած փողերի աղբիւրը որ ան-
կասկած ապօրինաւոր միջոցներով է ձեռք բե-
րված: Միթէ իրաւունք չունէք դուք կազմել
հասարակական վճիռ և կասկածանքի ենթակայ
եղողներին աքտորել քաղաքից: Այս մասին ևս
երկար խօսեցինք. այժմ անցնենք մի այլ եղեւ-
նագործութեան որը ծագում է վրէժխնդրութե-
նից և որի հեղինակը թէև իսկապէս յայտնի չէ,
բայց կասկած են տանում յետագայ անցքում
պատմած երկուստարդի վրա: Մի երկուստարդ
նշանագրվում է այստեղ մի օրիորդի հետ: Մի
օր այդ երկուստարդը հարբած տուն է մտնում
իր հարսնացուի մօտ և առանց յայտնի պատ-
ճառի խանչալ է քաշում նրա վրա և սկսում է
բղաւել և հանդիլ նրան: Այդ անցքից յետոյ
աղբիւր այլ ևս չէ ուղում կապել իր ճակատա-
գիրը մի այդպիսի հրէշի հետ, որը դեռ ևս չը
պակասել յայտնի է անում իր պակասութիւն-
ները: Երկուստարդը սպառնում է իր վրէժը
առնել աղջկայ գերդաստանից: Անցնում են մի
քանի շաբաթներ: Մի առաւօտ գնում են գոմը
և տեսնում են իրանց ձիերից երեքը սատակած,
իսկ չորրորդը հաղիւ ոտքի վրա է կանգնած:
Քննում են դարմանը և նրա մէջ գտնում թղթի
կտորներ: Յայտնվում է որ գոմի փողերի պա-
տուհանը ճանապարհի փոխարէն է ծառայել չա-
բագործին:

Առհասարակ մեր մէջ իրական սեռի գրու-
թիւնը շատ աննախանձելի է: Օրիորդին մարդու
տալիս կամ բոլորովին չեն հարցնում նրա հա-
մաձայնութիւնը, կամ եթէ հարցնում են, նա
կարող չէ լինում բացատրել, մանաւանդ երբ ծը-
նողներն ևս գոյում են երկուստարդին և երբ երի-
տասարդը մի փոքր հարուստ է, այդ դեպքում
արդէն ամեն մի դատողութիւն վերջնականա-
պէս անտեղի է երևում և աղջկայ համար ևս
մի է ով և լինէր այդ անձը: Նա իր անկախ
գոյութիւնը ապահովելու համար միջոցներ չունի
որ կարողանար իր սրտի ցանկութեան հետեւե-
լով մի ամուսին գտնել իրան, այլ աչքերը խը-

փած, նա կոյր հնազանդութիւն ցոյց պէտք է
տայ իր ճակատագրին...

Բայց այս հարցի մասին բաւականին խօսել
են թէ մեր պարբերական հրատարակութիւնների
թղթակիցները և թէ նոյն իսկ նրանց խմբա-
գիրները և ևս աւելորդ եմ համարում իմ կողմից
աւելի երկար խօսել այդ կրկնութիւն չանելու
համար:

Այս րօպէս երբ կամենում էի նամակ կըն-
քել, լսում եմ որ նամակում յիշած խոսք այս
գիշեր ևս ուղեցել են կրակի: Վառած պապի-
րօսը գցում են մէջը, անցնալ գիշերվայ անցքից
յետոյ նշանակած պահապանը տեսնում է և շու-
տով հանգցնում են արդէն տարածվող կրակը:

Խ. Մառանկոզեանց

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐՈՒ

«Правит. Вѣстн.» լրագրի ներկայ տարվայ
№ 94 մէջ ապված է մի հաղորդութիւն սպան-
ված և ծանր վիրաւորված օֆիցերներին որդի-
ները կրթելու և դաստիարակելու համար Բար-
ձրագոյն հրամանով մի հիմնարկութեան բացվե-
լու մասին: Հիմնարկութիւնը բաց է անում Ս.
Պետերբուրգի տիկիներին բարեգործական շըր-
ջանը, որին նախագահում է Նորին Կայսերա-
կան Բարձրութիւն Եւգենիա Մակարովիչանօվնա,
Օւլէնբուրգեան իշխանուհին:

Այս առիթով Նորին Բարձրութեանը ներկա-
յացած խնդիրներին թիւը շատ աննշան է. Նո-
րին Բարձրութիւն Եւգենիա Մակարովիչանօվնա,
Օւլէնբուրգեան իշխանուհին մեկնելով այս հան-
գամանքը նշանով, որ յիշալ բարեգործութեան
մէջ պէտք ունեցող շատերին չէ պատահել կար-
գալ «Правит. Вѣстн.», կամ նրանից հաղորդու-
թիւնը արտատպող լրագիրները, խնդրում է օգ-
նել հիմնարկութեան մասին տեղեկութիւնները
տարածելու:

«Правит. Вѣстн.» լրագրի նոյն № 94-ի մէջ
ցոյց են տուած երեխաներին ընդունելու ման-
րամանութիւնները:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ որ հոկտեմբերի
26-ին այնտեղի հայոց թատրոնում կը ներկա-
յացնեն «Պէպօ» կոմեդիան հեղ. Գ. Սունդու-
կեանցի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԻՍ

Իշխան Բիւմարկը գերմանական պարլա-
մենտի հոկտեմբերի 9-ի նիստին, պատաս-
խանելով ընդդիմադրական կուսակցութեան
անդամ Զօննէմանին, մեղադրեց նրան Փրան-
սիական կառավարութեան հետ յարաբերու-
թիւններ ունենալու մէջ: Իշխան Բիւմարկի
ճառի այդ բաժինը ծանր տպաւորութիւն
գործեց Ֆրանսիայի հանրապետական քաղա-
քական շըջանների մէջ: Գերմանական կանց-
լերի անտեղի յարձակումները Ֆրանսիա-
կան կառավարութեան վրա մի նախազու-
շութիւն էր Ֆրանսիայի արտաքին գործերի
մինիստրութեան համար, որովհետեւ իշխանի
խօսքերը ապացուցեցին, որ յիշեալ մինիստ-
րութիւնը սխալ ընթացք է բռնել Գերմա-
նիայի վերաբերութեամբ:

Ֆրանսիական կառավարութիւնը յետ կան-
չեց Բերլինից իր գեապան Գոնսօ-Բիրօնին և
նրա տեղ նշանակեց կոմս Սեն Վալէնթին, ի-
մանալով, որ առաջինը անսխալ էր իշխա-
նին: Գամբետտա ամեն յարմար և անպարմար
միջոցից օգուտ քաղելով հաւատացնում էր
իր լրագրի մէջ, որ իշխան Բիւմարկին իզուր
են Ֆրանսիայի թշնամի ներկայացնում, որ
նա աշխատում է խաղաղութիւն պահպանել
այդ պետութեան հետ, քանի որ պետու-
թիւնը հանրապետականներին է կառավար-
վում:

Իշխան Բիւմարկի վերջին ճառը փարա-
տեց երեխայական այդ յոյսերը, որոնց կա-
րող են ունենալ այնպիսի մարդիկ, որ չը վի-
տեն թէ իրանց հայրենիքից դուրս ինչ է
կատարվում:

Առանց որ և է առիթի, միայն կամենա-
լով ճշնուն գործել իր լռողների վրա իշ-
խան Բիւմարկ թող տուեց իրան խօսել Ֆր-
անսիայի և նրա կառավարութեան վրա
այնպէս, ինչպէս չեն խօսում մինչև անգամ
իր թշնամի երկրի և կառավարութեան մա-
սին: Իշխան Բիւմարկ ոչ թէ միայն մեղա-
դրեց Ֆրանսիական կառավարութեանը գեր-
մանական սօցիալիստներին օգնելու մէջ, այլ
և այնպիսի թշնամութեամբ և արհամարհան-
քով խօսեց Ֆրանսիացիների մասին, որ ան-
ներել է նրա դրութիւնը ունեցող պետա-
կան մարդուն:

Գեռ երկու ամիս սրանից առաջ դատաս-
տանական քննութիւնը հաստատեց, որ պրու-
սական կառավարութեան գործակալ բա-
րօնուհի Ե՛յհշտեդ Փարիզում գումարներ էր
բաժանում կոմունիստական կեղտոտ լրագիր-
ներ հիմնելու համար, իսկ այժմ նոյն կառ-
վարութեան գլխաւոր գործիչը մեղադրում է
Ֆրանսիային:

Բիւմարկի այդպիսի վարմունքը մանաւանդ
զարմանալ է այն պատճառով, որ ինքն
ամենից լաւ հաւատացած է Զօննէմանի դէմ
արած մեղադրանքների անձրութեան մէջ:
Զօննէման թէ իր հարստութեամբ և թէ իր
քնաւորութեամբ շատ բարձր է այդպիսի
կասկածներից:

«Голосъ» լրագրի թղթակիցը գրում է հե-
տեւայլ:

«Վարող եմ հաստատ ասել, որ Փարիզում
գտնվող գերմանական դեսպանատունը եր-
բէք Ֆրանսիական կառավարութեանը չէ վե-
րաբերել որ և է յարաբերութիւն սօցիալիստ-
ների հետ: Իշխան Բիւմարկ ստանում է այդ-
պիսի տեղեկութիւններ ոչ թէ գեապանատա-
նից, այլ ուրիշ աղբիւրներից, որոնց նա ա-
ւելի հաւատում է, ինչպէս այդ բանը երե-
ւաց կոմս Արնիմի դատաստանական գործից
յետոյ:

Այսպէս թէ այնպէս գերմանական կայսե-
րութեան կանցլերի յարձակումները Ֆրան-
սիայի վրա հանրապետականներին սաստիկ
շփոթեցրին: Նրանց լրագիրները կորցրին
իրանց և չը գիտէին ինչպէս վերաբերվեն
իշխանի ճառին:

«Journal des Debats» երկու օր լռելուց
յետոյ միայն նրանով մխիթարեց իր ընթեր-
ցողներին, որ իշխանի նախորդ մինիստրները
աւելի վատ կարծիք էին յայտնում Ֆրան-
սիայի մասին:

Գամբետտայի օրգան «Republique Fran-
caise» աշխատում էր Բիւմարկին անմեղ
դուրս բերել, հաւատացնելով, որ նա այդ-
պէս խօսել է տաքացած ժամանակ և որ նրա
խօսքերին ոչինչ նշանակութիւն չէ պէտք է տալ:
Միայն «Temps» Ֆրանսիական լրագիրը
կանցլերի վարմունքը անվայել անուանեց և
բացարձակ յիշեցրեց, որ Ֆրանսիան մտադիր
չէ համբերել, որ օտար մեծ պետութեան ներ-
կայացուցիչը մոռանայ նրա վերաբերութեամբ
հասարակ դիպվածադրական քաղաքավարու-
թեան կանոնները:

Միապետական լրագիրները օգուտ չը քաղե-
ցին իշխանի խօսքից հանրապետականներին
պակարակելու համար: Նոքա այնքան ազգա-
սեր էին, որ իրանց անպատված համարեցին,
գտնելով որ իշխանի մեղադրանքները ուղղված
էին ոչ թէ միայն մի կուսակցութեան, այլ
ամբողջ Ֆրանսիայի դէմ:

Իշխան Բիւմարկի ճառի հակապատկեր
են ներկայացնում Գամբետտայի Գրենօբլում
ասած երկու քաղաքական ճառերը, որոնց
թէ բովանդակութեան և թէ ձևի կողմից պե-
տական մարդու արժանի կարելի է համարել:
Բիւմարկի համար ասում են, որ նա շատ լաւ
ճանաչում է Ներօպան, բայց ծանօթ չէ իր
հայրենիքի հետ, Գամբետտայի մասին հակա-
ռակ կարելի է ասել, որ նա շատ քիչ է
ճանաչում Ներօպան և նրա քաղաքականու-

թիւնը, բայց շատ լաւ ծանօթ է իր հայրենի-
քի հետ:

Նրա վերջին ճանապարհորդութիւնը Ֆրան-
սիայի հարաւային նահանգներում սենատի
ընտրութիւնները հանրապետականների հա-
մար ձեռնառու անելու նպատակով հաստատու-
մ են այդ հանգամանքը: Գամբետտան իր ճանա-
պարհորդութեան ժամանակ այնպիսի ձևեր
էր գործածում, որ Ֆրանսիացիք չէին կարող
չը հաւանել: Գամբետտան այնպէս էր այցե-
լում գանապան քաղաքները, ինչպէս մի կայ-
սեր: Այսպիսի արտաքին ձևերը Ֆրանսիացիք
սիրում են: Իր ձառերի մէջ Գամբետտա գլ-
խաւորապէս խօսեց սենատի ընտրութիւննե-
րի մասին և խնդրեց հասարակութեանը ընտ-
րութիւնների ժամանակ թողնել տեղական
մանաւոր շահերը և ի նկատի ունենալ մի-
այն ընդհանուր քաղաքական օգուտները:
Գամբետտայի փաստաբանութիւնը բոլորովին
պարզ և հասկանալի է: Նա խօսեց նոյնպէս
կրօնի մասին: Յայտնեց իր յարգանքը դէպի
դաւանութիւնը և կաթօլիկութիւնը և պա-
խարակեց հոգեւորականութեան ձգտումները
քաղաքական գործերի մէջ խառնել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10հոտ, 17/29 հոկտեմբերի: «Times»
լրագիրը քննելով Ռուսաստանի այժմեան գոր-
ծողութիւնները Արեւելքում, առաջարկում է
որ Անգլիան, Ֆրանսիան և Աւստրիան միա-
սին գործեն Բերլինի գաղաքային համեմատ
Ռուսաստանին իր պարտականութիւններ յի-
շեցնելու համար: Լրագիրը յոյս ունի, որ
Գերմանիան կը միանայ այդ գործողութիւն-
ներին, ասում է, որ իշխան Բիւմարկը պէտք
է օգնէ իր անկատար ստեղծուածը լրացնե-
լուն: «Times» նախազուշակում է, որ պե-
տութիւնների այդպիսի գործողութիւնը լաւ
հետեւանքներ կունենայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: Նղա-
նակը տաք է անձրևային է:

ՎԻԵՆՆԱ, 18/30 հոկտեմբերի: Ի նկատի
ունենալով, որ այժմեան հանգամանքներում,
չէ կարելի պարլամենտական մինիստրութիւն
կազմել, Պրետիս վերադարձրեց կայսրին իրան
տուած լիազորութիւնը կարենաւ կազմելու
համար:

Կ. ՊՈԼԻՍ, 17/29 հոկտեմբերի: Ասում են,
որ իշխան Լօբանօվ-Բոստօվսկի ուղևորվում է
Վիլնայի, որովհետեւ այնտեղից կանչված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «Голосъ»
լրագրին Վիեննայից հեռագրում են. «Pan-
fusa» լրագիրը հաղորդում է, որ հաստատ-
վում է այն լուրը իր թէ Անգլիան մի քանի
պետութիւնների համաձայնութեամբ հարց
առաջարկեց Ռուսաստանին ուղտաց զօրքերի
վերջին շարժողութիւնների մասին: Այդ քայլը
Անգլիան արել է առանց խորհրդակցելու պե-
տութիւնների հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «Голосъ»
լրագրին Պեռնից հեռագրում են, որ Ունդա-
րական ազգային Ժողովը մասնաժողով կանգի-
րատների մեծամասնութիւնը կոմս Անդրաշի
քաղաքականութեան հակառակորդներ են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «Прав-
ит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ 155
Կուբինսկի հետեւակ գունդի գնդապետի օգ-
նական Կորիով նշանակված է անդրկովկա-
սեան տեղական պահպանների տեսուչ Ն-
րեանի նահանգում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «Голосъ»
լրագրին Վիեննայից հեռագրում են. «Թիւր-
քիայից հետգհտէ ստացվող անհանգստաց
նող լուրերի պատճառով աւելի համոզվում են
պատերազմի անհրաժեշտութեան մէջ, որ,
ինչպէս կարծում են գարուները կը սկսի:
Այդ հանգամանքը ինչպէս և Ռուսաստանի,
Իտալիայի և Թունաստանի միմեանց մօտենա-
լու լուրը բաւական աղբեղութիւն ունեցու-
կոմս Անդրաշի վրա, որ նշանաւոր կերպով
սանձահարված է Հեռագիրներին նայելով Մա-
կեդոնիայի ապստամբութիւնը Ալբանիան ըն-
կերութիւնից առաջնորդված շարժման ձեւով է
կազմակերպվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 հոկտեմբերի: «С. Петер-
Бѣдом.» լրագիրը լուր է հաղորդում, որ մեր
կառավարութիւնը վճռել է օգնել Աֆգանիս-
տանին, երբ նա կը պատերազմի Անգլիայի
դէմ: Մի քանի մասնաւոր անձնք այդ առար-
կայի համար նուիրատուութիւններ են տնու-
կան ցանկացողներ ուղևորվել Աֆգանիստան
իրբւ կամաւորներ:

